«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման արդյունավետ մեթոդներ և հնարներ

ԱՌԱՐԿԱ - դասվար

ՀԵՂԻՆԱԿ - Էլինա Ալոյան /9/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ- ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի հիմնական դպրոց

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ -

Բովանդակություն

1 . Ներածություն

2 . Գլուխ 1 - հեքիաթներում բարու և չարի ընկալումը երեխայի մոտ

3 . Գլուխ 2 - ինչ է հեքիաթը, հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում

4 . Գլուխ 3 - տարրական դասարաններում հեքիաթների կրթական ազդեցությունը անձի ձևավորման գործում

5 . Գլուխ 4 - հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ /դերախաղ և արտահայտչական միջոցների օգտագործում/

6 . Եզրակացություն

7 . Օգտագործված գրականություն

Ներածություն

Ժամանակակից հայ դպրոցն առանձնացված, մեկուսացված միավոր չէ և այդպիսին լինել չէր կարող: Այն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա:Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների, մեթոդական հնարների ու եղանակների կողքին

գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը:

Մանկավարժական նոր տեխնոլոգիաների և ավանդական ձևերի ու եղանակների զուգորդումն ուսուցչից պահանջում է ամենօրյա տքնաջան աշխատանք: Օրախնդիր հարց է , թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանով է պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառությանը: Նա պետք է անընդհատ կատարելագործվի, նորացնի դասավանդման ձևերն ու մեթոդները, որպեսզի քայլի ժամանակին համընթաց:

Դասավանդումն անընդհատ զարգացող գործընթաց է: Ժամանակակից դասերը չպետք է միօրինակ լինեն: Ուսուցչի առաջնահերթ նպատակն է դրանք դարձնել բազմաբնույթ և հետաքրքիր:

Ուսուցիչը իր ուսերին մեծ պատասխանատվություն է կրում աշակերտների մոտ սերմանել ընթերցասիրություն, նպաստել աշակերտի ներուժի զարգացմանը:

Մանկությունը մարդկային կյանքի արշալույսն է՝ միշտ գեղեցիկ, անբիծ, հաշտ ու խաղաղ: Եվ ամբողջ կյանքում մանկության հուշերը մեր ականջին շշնջալու են անմոռանալի օրերի լուսե հեքիաթը…

Տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման նպատակն է.

1 . զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակությունները

2 . կատարելագործել աշակերտի բանավոր, կապակցված, գրագետ խոսքը

3 . ձևավորել հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն

4 . ուսուցանել բարու հաղթանակը չարի նկատմամբ

5 . աշակերտների մոտ ձևավորել բարոյական որակներ

6 . ուսուցանել սահմանել հեքիաթը, տարբերակել նրա տեսակները

7 . ձևավորել աշակերտների մեջ մարդկային բարձր արժեքներ , գրքի նկատմամբ սեր, պատմելու կարողություն:

. Ամենից առաջ բարի եղեք, բարությունը զինաթափում է մարդկանց մեծ մասին :

/Լակորդեր/

. Մարդու մեջ որքան բարություն կա , այնքան կյանք կա:

/Ուելս/

. Բարի արարքները երբեք չպետք է հետաձգել:

/Սերվանտես/

. Բարությունը հոգու համար նույնն է, ինչ առողջությունը մարմնի համար:

/ Լև Տոլստոյ /

. Բարությունը հաղթում է բոլորին, իսկ ինքն անհաղթ է:

/ Լև Տոլստոյ /

. Որտեղ վերջանում է բարին , այնտեղ սկսվում է չարը, և որտեղ վերջանում է չարը, այնտեղ սկսվում է բարին:

/Լարոշֆուկո /

. Չարը չարով կորավ, իսկ Բարին բարությամբ լցվեց:

/ Վ. Այգեկցի /

ԳԼՈՒԽ - 1

Հեքիաթներում բարու և չարի ընկալումը երեխայի մոտ

Մանկական գրականությունը , հատկապես հեքիաթը , մանկավարժի դաշնակիցն է , փոքրիկի դաստիարակն ու խորհրդատուն: Այն նպաստում է երեխայի բնավորության կազմավորմանը, աշխարհայացքի հիմքերի ձևավորմանը , հարստացնում նրա նախնական գիտելիքները , կենսափորձը , բառապաշարը , հղկում գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը:

Անփոխարինելի է հեքիաթների դերը տարրական դասարաններում սովորողների լեզվանտածողության , ստեղծագործական երևակայության զարգացման առումով:

Հեքիաթներ ընտրելիս անպայման պետք է հաշվի առնել դրանց գրական - գեղարվեստական արժեքներն ու առանձնահատկությունները: Միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար դառնալու է ուժեղ ու կայուն ներշնչման աղբյուր: Փոքրիկի համար ամեն ինչ պետք է լինի զարմանալի , հրաշալի , հեքիաթային , ոչ հասարակ: Երեխաների մեջ ազնվություն և ճշմարտախոսություն , բարոյական որակներ ձևավորելու նպատակովանհրաժեշտ է նրանց ուշադրությանը ներկայացնել և դրական , և բացասական գործող անձեր պատկերող գեղարվեստական ստեղծագործություններ:

Բարու ու չարի հասկացողությունը երեխայի մեջ սկզբնավորվում է կյանքի զարգացման դեռևս ամենավաղ տարիքում , երբ փոքրիկն ընկալում է աշխարհը , շփվում իրեն անծանոթ բազում կենցաղային և հոգեբանական իրավիճակների հետ , որոնք , բնականաբար , հարցեր են առաջացնում: Դա ամենքին ծանոթ «ինչուիկների» տարիքն է , երբ երեխաները « հայտնագործում են » աշխարհը: Հենց այս պահից էլ բարին ու չարը , լավի ու վատի հետ շաղախված , մշտապես գտնվում են նրանց հետաքրքրությունների կենտրոնում: Երեխայի համար բարին ու լավը իր մայրիկն է , հայրիկը , ընտանիքի անդամները , այն մարդիկ , ովքեր անսահման սիրում և փայփայում են իրեն , երբեմն էլ անցնում բոլոր թույլատրելիի սահմանները: Սակայն երբ մայրիկը հանկարծ նրան արգելում է որևէ բան կամ թեթևակի պատժում է , դառնում է երեխայի համար չար , և վերջինս անմիջապես , առանց մտածելու արտահայտում է բողոքը՝ « Դու չար ես... »:

Երեխան չարի ու բարու աշխարհն ընկալում է նաև գույների միջոցով: Սև գույնի առարկաներն ու կենդանիները , մուլտֆիլմերի հերոսները զուգորդվում են չարի կերպավորմանը: Օրինակ՝ կարմիր հագուստով Սարդ - մարդը բարի ու սիրելի կերպար է երեխաների համար , քանզի ամենաանկարելի ձևերով օգնության է հասնում մարդկանց:

Երեխայի մտապատկերներում նա օժտված է գերբնական ուժով:

Սակայն թերևս սարդն իրականում այնքան էլ բարի միջատ չէ: Իսկ ահա սև հագուստով նրա ախոյանը չարի մարմնացում է: Սարդոստայնը թակարդ է միջատների համար, նույնիսկ այս բառը որպես թևավոր խոսք է օգտագործվում , երբ որևէ մեկը մյուսի համար ծուղակ է պատրաստում: Նույն կերպ էլ սև գույնի զինվոր Ռենջերը երեխայի պատկերացմամբ չար է , իսկ այլ գույնի զինվորները բարի են:

Տարրական դասարանների աշակերտների միջավայրում չարի ու բարու ընկալումը կատարվում է լավ ու վատ հասկացությունների համատեքստում: Չարի ու բարու պայքարը հավերժական է , չարը միշտ էլ ընկալվում է բարու հետ պայքարի մեջ:

Հեքիաթների ընթերցումը երեխաների մեջ առաջացնում է բարուն և գեղեցիկին նմանվելու , հասնելու ձգտում և , միաժամանակ , չարին հաղթելու և դիմակայելու կամք: Դասապրոցեսում պետք է հասնել նրան , որ երեխան բարություն պետք է անի ոչ միայն այն նպատակով , որ իրեն գովեն , փառաբանեն , այլ բարի գործը կարող են գնահատել թեկուզ առանց բառերի: Այն պետք է արվի ի սրտե աննկատ և անշահախնդիր:

Երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում , այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան կատարելու բարի գործեր և հասկանալու , որ հաղթանակի բերկրանքը հեշտ չի տրվում: Այսինքն հեքիաթը պետք է մեկնաբանվի և իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով:

Գլուխ - 2

Ինչ է հեքիաթը, հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում

Հեքիաթը բանահյուսական ժանր է՝վիպական բանահյուսության մեջ մտնող հնագույն առասպել: Այն ընդգրկում է հնագույն աստիճանակարգության բոլոր սանդղակները . վերևում՝ աստվածներն են , հետո՝ թագավորները , սպարապետները , ձկնորսները , իսկ ներքևում՝ հասարակ ժողովուրդը:

Եթե երեխան պատկերացնի այս աստիճանակարգությունը , ընդհանուր տեղեկություններ ձեռք կբերի հեքիաթային աշխարհի համապատկերի մասին:

Հեքիաթներում ժողովուրդն ամփոփել է իր երազները , ձգտումները իմաստնությունը: Անսահման տպավորիչ է շվեդացի գրող , Նոբելյան մրցանակի դափնեկիր Սելմա Լագերլոֆի կյանքը / 1858 - 1940/: Ս. Լագերլյոֆը ծնվել է Շվեդիայում՝ Մորբակի կալվածատիրական դաստակերտում: Երեքամյա աղջնակը կաթվածահար է լինում և տասնհինգ տարի շարունակ գամված մնում անկողնում: ՀետագայումՍելման գրում է , որ ինքը կարողացել է ապրել տատիկի՝ իր կյանքի համար պայքարի և տառապանքների շնորհիվ: Նա չէր հեռանում թոռնիկի անկողնուց և նրան սփոփում էր իր հրաշալի հեքիաթներով: Հենց այդ կախարդական աշխարհն էլ ուժ ու կորով է տալիս նրան , զսպում , որ չարտասվի , չկոտրի խաղալիքները և չտառապի հուսահատությունից՝ տեսնելով , թե ինչպես են վազվզում , խաղում իր եղբայրներն ու քույրերը: Տատիկի մահից հետոՍելման լսում է իր բարի դայակ Նանայի հեքիաթները արքայազների , այքայադուստրերի , ջրահարսների և ջրային ոգիների մասին: Հետագայում նա գրի է առնում իր լսած կախարդական պատմությունները , որոնք տվեցին իրենց անմահական պտուղները. իր արտասովոր ու հանճարեղ գործերի համար 1909 թվականին գրողն արժանացավ Նոբելյան մրցանակի:

Ինչպես ասել է Հովհաննես Թումանյանը՝ « Հեքիաթներում անդունդներ են՝ խորը , անծայր , անվերջ: Հեքիաթը հարուստ և շքեղ աշխարհ է: Հեքիաթները ամենաբարձր ստեղծագործություններն են . նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել , բայց հեքիաթի են ձգտում »:

Երևի չկա մի մարդ , որ հեքիաթներ չսիրի: Հեքիաթը կարող է հաճելի ժպիտներ պարգևել երեխային , մղել նրան մտորումների գիրկը և տրամադրել ստեղծագործական աշխատանքի:

Անձի ձևավորման , արդյունավետ ուսուցման և գիտելիքների խթանման ուղղությամբ կան բազում խնդիրներ: Ինտերակտիվ տեխնոլոգիաների մուտքն իր դրական ազդեցությունից բացի ունեցավ նաև բացասական ազդեցություն: Կորել է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, երեխաները քիչ են շփվում , բավարար չեն շարժվում , ֆիզիկական ակտիվությունը պակաս է , քիչ են նաև բակային խաղերը:

Այս խնդիրների լուծմանը իրենց փոքրիկ ազդեցությունն ունեն նաև հեքիաթները , երեխան հավատում է հրաշքներին: Հեքիաթները բարձրացնում են երեխայի ճանաչողականությունը, զարգացնում են երևակայությունը , ձևավորում ճիշտ խոսքը : Նրանք ավելի հեշտ են ընկալում հեքիաթը , քան մեծերի դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները ցույց են տվել , որ այն երեխաները , ու փոքր հասակից հեքիաթներ են պատմել , ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ , սահուն ու գրագետ արտահայտել:

Հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի պատկերավոր և զգացմունքային: Ցանկացած հեքիաթ իր ուրույն ազդեցությունն ունի երեխայի վրա: Կարող է լինել նաև բացասական ազդեցություն: Որոշ հեքիթներում կան չար կախարդներ , պատկերներ , որոնք պարունակում են բավական սահմռկեցուցիչ տեսարաններ: Ուսուցիչը պետք է մատուցման ճիշտ ձևը ընտրի՝ տխրության կողքին ուրախությունը, չարի կողքին՝ բարին, սարսափելիի կողքը՝ հաճելին ու գեղեցիկը , վախկոտի կողքին՝ քաջը, դավաճանի կողքին՝ ընկերասերին ու հայրենասերին և այլն:

Տարրական դպրոցի աշակերտների մոտ շատ կարևոր դեր ունի հեքիաթը: Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկը տալ երեխային այնպիսի կրթություն , որ նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլ ձեռք բերել ինքնուրույն մտածելու , ստեղծագործելու կարողություն , ինչպես նաև անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն , կընձեռնի այդ կարողություններն ու հմտությունները գործնականում կիրառելու:

Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում , որ կարողանա աշակերտին ճիշտ ուղղություն ցույց տալ , հնարավորինս հանգամանորեն բացատրի ճիշտն ու սուտը , ճիշտ նկարագրի այս կամ այն հերոսին , օրինակների հիման վրա պարզաբանի չարի ու բարու , լավի ու վատի պայքարը:Ուսուցիչը պետք է աշակերտին ազատ թողնի հեքիաթը քննարկելու , վերլուծելու , բանավիճելու , հերոսների լավ ու վատ լինելու շուրջ:

Հեքիաթային կերպրները , պատկերներն ու իրադարձությունները հեշտությամբ ամրակայվում են երեխայի հիշողության մեջ և մտապահվում երկար ժամանակ: Մարդկությունը մշտապես հեքիաթներ է հորինելն դրանք փոխանցել սերնդեսերունդ: Դա կենսափորձի փոխանցման բնական և հուսալի միջոց է: Հեքիաթների նկատմամբ սիրո մեջ ամփոփված էնաև այդ կենսափորձը յուրացնելու ձգտումը:

Ժողովրդական հեքիաթները գիտելիքների շտեմարաններ են: Դարեր շարունակ մարդիկ հաջորդ սերունդներին գիտելիքներ հաղորդել են առակների , պատմությունների, լեգենդների և առասպելների ձևով: Հեքիաթների միջոցով ուսուցումը նույնպես գիտելիքների փոխանցման ընդունված տարատեսակ էեղել մարդկության պատմության մեջ:Հեքիաթների բազմազանության մեջ իրենց ուրույն տեղն ունեն դիդակտիկ / ուսումնական /հեքիաթները: Դրանք ստեղծվում են մանկավարժների կողմից: Այդ կերպ կարծես « փաթեթավորված է » ուսումնական նյութը և ավելի գունագեղ ու հետաքրքիր ձևով մատուցվում աշակերտներին:

Երեխաների հետ խոսելով տվյալ ժանրի կառուցվածքի մասին, պետք է նրանց բացատրել, այն հանգամանքը , որ հեքիաթներում մի խումբ կերպարներ գործում են ինչ - որ արարքներ՝իրենց նպատակներն իրականացնելու մղումով: Այդ կերպարներն իրար օգնում են կամ խանգարում:

Իրար դեմ կանգած են բարի և չար ուժեր: Հեքիաթը պետք է անպայման ավարտվի բարի ուժերի հաղթանակով: Իսկ բարու հաղթանակը հեշտությամբ չի տրվում: Ընտրյալ հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով , բավարարում իրենց առջև դրված անիրականանալի պայմաններ , հաղթահարում արգելքներ և , ամենակարևորը, բարին մենակ չի գործում, նրան օգնում են հրաշագործ ուժերը:

Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր և հանդիսավոր երևույթները, գաղտնի , առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Նա պետք է ուղորդի երեխային՝ մտքի և հոգու ճանապարհով: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ , իմաստուն լինել, հետին աղքատն էլ:Աղքատը լիաչք է, լիասիրտ աննախանձ: Նաանտրտունջ ու անլաց կրում է իր դժբախտությունները: Անվրեժ է չարիքի դեմ:

Հեքիաթի միջոցով աշակերտը գիտակցում է այն հանգամանքը, որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը ոչ էլ ձախորդությունը արատներ չեն: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով , առանց վերամբարձ խտրաբանության: Այդ կերպ վեր է հանվում հեքիաթի բարոյախոսությունը:

Կարող հանգամանք է հեքիաթն սկսող բառերի նույնականությունը՝ լինում է, չի լինում, կար-չկար , ժուկով-ժամանակով, ժամանակին և այլն: Անհրաժեշտ է բացատրել, թե ինչու են հենց այդ բառերն օգտագործվում որպես սկիզբ: Պետք է բացատրել, որ այդ Ժամանակը հայտնի է և անհայտ: Այդպիսի բան , իրոք, եղել է կամ չի եղել: Բայց դա չի նշանակում, թե հեքիաթի արտահայտած գաղափարները սուտ են: Ի վերջո հեքիաթի արտահայտած գաղափարը չարի ու բարու կռիվն է:Հարկավոր է կարողանալ այնպես պատմել այդ հեքիաթը, որ երեխային հաճույք պատճառի այն:Նա պետք է մտովի տեսնի այդ պատկերները, դրանց հրաշագործ ուժը: Երեխան իրեն պետք է պատկերացնի հեքիաթի հերոս, որը հաղթում է չարին: Իսկ այդ հրաշքը պետք է բացատրել ամենապարզ օրինակներով: Ահա օրինակներից մեկը. « Ձմռանը ծառերը չորանում են, դառնում վառելու փայտ, գարնանը ինչ - որ ուժով , որը մարդուց դուրս է, դալարում են: Սա է հրաշքը»:

Հեքիաթը լինում է հրաշապատում, իրապատում, կենցաղային-երգիծական:

Հրաշապատում հեքիաթն անդրադարձն է մարդու կողմից տիեզերքին և գիտությանը՝ ճանաչողության, դիտարկման, մտահայեցողության, երևակայական վերացարկման և բանաստեղծականացման միջոցով:Այս տեսակի մասին խոսելիս պետք է նշել, որ այստեղ գերակշռում է մարդուց դուրս գտնվող հրաշագործ, գերբնական ուժը:

Այդ ուժերի առկայությունը նույնպես հարկավոր է բացատրել օրինակներով: Օրինակ՝ « Քամու պես արագ վազում է մարդը, դառնում է քար, այնուհետև քարացած մարդը դառնում է նորից մարդ » : Չարին հաղթելու համար մարդն օգնության է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին: Չէ որ այդ վերմարդկային ուժերը հրաշագործ են: Այսինքն երեխան ուշադիր հետևելով պետք է ճանաչի բնությունը, և կարողանա նրա այդ ուժը կարգել իրեն օգնական: Հրաշք է նաև այն, որ ամբողջ բնությունն օժտված է կերպարանափոխության զորությամբ:

Իրապատում հեքիաթն անդրադարձ է մարդու կողմից մարդկային հարաբերություններին, մարդկային հասարակության ճանաչողությանը, դիտարկման հոգեբանական վերլուծության և կենսափորձի կերպավորման միջոցով: Այստեղ նկարագրվում է մարդու կյանքը, նրանց կենցաղի լավ ու վատ կողմերը, ծաղրի են ենթարկվում մարդկանց զանազան արարքներ՝ չարություն, ագահություն, մեծամտություն և այլն: Այս հեքիաթի մեջ պետք էցույց տալ որ հրաշքը ոչ միայն բնության տարերային ուժերի մեջ է թաքնված, այլ նաև մարդու ներքին ուժերի և հնարավորությունների մեջ Դա սիրո և խոհեմության հրաշքն է:

Կենցաղային - երգիծական հեքիաթն անդրադարձ է կյանքի երկու հակադիր կողմերի՝ լուրջ և անլուրջ , իմաստության և հիմարության ճանաչողության ու ծիծաղի միջոցով:

Հեքիաթը հարուստ է ժողովրդական արտահայտություններով, դարձվածքներով, իմաստալից և թևավոր խոսքերով:

Վերջին ժամանակներում աշակերտների հոգեբանական, վարքային և այլ խնդիրներ լուծելու համար, հատկապես, երբ դասարանում կա ուսումնական դժվարություն ունեցող երեխա, կարելի է կիրառել թերապևտիկ հեքիաթները: Այս հեքիաթները սովորաբար հիշեցնում են ժողովրդական կամ հայտնի հեղինակների հեքիաթները, իսկ երբեմն էլ դրանք գրական մեծ նշանակություն չեն ունենում, քանի որ շատ ավելի պարզ են ու հասարակ:

Սակայն, չնայած պարզությանը, թերապևտիկ հեքիաթները ձգտում են օգնել երեխաներին կարգավորելու իրենց ներքին աշխարհը: այս հեքիաթների ուժը պայմանավորված է նրանով, որ երեխաների կողմից այն ընկալվում է միաժամանակ երկու մակարդակով՝ գիտակցական և ենթագիտակցական:

Գիտակցական մակարդակը այն է, երբերեխան հաղորդակից չի լինում հեքիաթային հերոսների ցավին, մտածում է , որ այն իր մասին չէ, այսինքն հեքիաթը ընկալում է այնպես, ինչպես որ այն կա:

Ենթագիտակցական մակարդակը , « հավատում է » իր լսածին և տալիս է վարքի փոփոխման համապատասխան ծրագիր՝ վերակարգավորում է արժեքները, հայացքները, դիրքորոշումը:

Շատ կարևոր է , երբ երեխան համեմատում է հեքիաթի սյուժեն իր կյանքի հետ, իրեն նմանեցնում է հերոսներին, ինչպես նաև ձեռք է բերում փորձ կամ հասկանում է հեքիաթում թաքնված հաղորդագրությունը:

Հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում կարևոր է նաև այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստիև նրան հասու են բոլոր հեքիաթային , երկնային և երկրային գանձերը, երեխան հավատում է հրաշքին:

Ուսուցիչը հեքիաթը մատուցելուց, քննարկելուց հետո աշակերտներին առաջարկում է կառուցել հեքիաթային բուրգ՝ հետևյալ ձևով.

1. հեքիաթի հեղինակը
2. գործող հերոսների անունները
3. որտեղ են նրանք գտնվում
4. առաջին դրվագը
5. երկրորդ դրվագը
6. երրորդ դրվագը
7. հանգույցի լուծում
8. հեքիաթի վերջը:

Պետք է հետևել, որ հեքիաթի կառուցվածքը և իրադարձությունների հաջորդական ընթացքը ճիշտ պահպանվի:

Գլուխ 3

Տարրական դասարաններում հեքիաթների կրթական ազդեցությունը անձի ձևավորման գործում

Պատահական չէ, որ մանկագիր Սուրեն Մուրադյանը գրում է . « Մանկական իսկական , կատարյալ ստեղծագործությունն այն պատուհանն է, որից ճառագած լույսը ջերմացնում է մանուկ ընթերցողին, ձևավորում նրա հոգին: Այդ լույսն է օգնում մանուկ ու պատանի ընթերցողին տեսնելու , ընկալելու աշխարհի երևույթներըառարկաները, ընթերցողի առջև բացում էկյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ »:

Հանրահայտ է , որ ուսումնական գործընթացի հաջող իրականացումն էապես պայմանավորված է ուսուցչի գործիմացությամբ և տարբեր մեթոդներին տիրապետելու նրա հմտությամբ:

Անփոխարինելի է հեքիաթների դերը տարրական դասարանների աշակերտների լեզվամտածողության, ստեղծագործական երևակայության զարգացման առումով: Մանկական ստեղծագործություններ ընտրելիս անպայման պետք է հաշվի առնել դրանց գրական - գեղարվեստական արժեքներն ու առանձնահատկությունները: Իմ կարծիքով միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար դառնալու է ուժեղ ու կայուն ներշնչման աղբյուր:

Փոքրիկի համար ամեն ինչ պետք է լինի հրաշալի հեքիաթային, ոչ հասարակ, զարմանալի:

Աշակերտների մեջ ազնվություն, բարոյական որակներ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նրանց ուշադրությանը ներկայացնել և՛ դրական, և՛ բացասական գործող անձեր պարունակող գեղարվեստական ստեղծագործություններ:

Ս. Մուրադյանի « Բանի դրին՝ փախավ, հացի դրին՝ հասավ » հեքիաթում աշխատասիրությունն է գովաբանվում:

Տեղն է նրանց, ով չաշխատի,

Նա կմնա միշտ անոթի,

Միշտ անպատիվ ու սևերես,

Այս երկու ծույլ մկնկիկի պես:

Այս հեքիաթով պետք է դատապարտել ծուլությունը, աշխատանքից խուսափելու հակումը: Ուսուցիչը պետք է հասնի նրան, որ աշակերտները գիտակցեն, որ կյանքում աշխատանքն է հզոր շարժիչ ուժը:

Կամ մեկ այլ հեքիաթ. « Չար ուլիկը », որտեղ ուսուցիչը այս հեքիաթի միջոցով պետք է երեխաների մեջ դաստիարակի ծնողասիրություն:

Բա չե՞ս խղճում

Քո այծ հորը,

Մի քիչ գոնե

Նստիր կողքին,

Տաք աղյուս դիր

Փորին, ոտքին:

Այս տարիքում երեխաները առավել հուզական են և ապրում են հեքիաթների հերոսների կյանքով: Օրինակ՝ երբ ընթերցում ես « Գառնիկ ախպեր » հեքիաթը, երբ ուզում էին մորթել Ախպեր Գառնիկին, տեսնում ես աշակերտների աչքերից հոսող արցունքները:

Անառարկելի է , որ հեքիաթը աշակերտների ամենասիրած ժանրն է: « Հեքիաթը սուտ, բայց խրատող, ջահելներին դաս լինի թող »,- այսպես էր գրում մեծն Պուշկինը:

Դասապրոցեսում պարզել ենք, որ կան աշակերտներ, որոնք այնքան էլ շահագրգռված չեն հեքիաթներ լսել: Մերօրյա երեխաներին ավելի շատ հետաքրքրում են համակարգչային խաղերը, հեռախոսը:Այսօրվա մեր սերունդը էապես տարբերվում է նախորդներից: Հետևաբար պետք է փոփոխություններ կատարել ուսուցման մատուցման մեջ: Օրինակ՝ որպեսզի երեխան լսի, հարկավոր է օգտագործել համակարգիչ, ցուցադրել հեքիաթի մուլտֆիլմը կամ օգտագործել ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակներ ու մեթոդներ: Օրինակ՝ « Պատմելու » խաղը: Ցուցադրված նկարներով աշակերտները հորինում են հեքիաթ և պատմում: Նույն նկարի շուրջ տարբեր հեքիաթներ: Այս խաղը զարգացնում է նրանց երևակայությունն ու լեզվամտածողությունը:

Հետաքրքիր է նաև հեքիաթների « աղավաղումը »:Օրինակ՝ լինում է չի լինում մի աղջիկ՝ Դեղին Գլխարկ: Մի օր նա կաթ էր տանում մորաքրոջը: Աշակերտները ուղղում են սխալները, զարգանում է նրանց ուշադրությունն ու երևակայությունը:

Հեքիաթների աղավաղման մի տարբերակ էլ հեքիաթի թեման « շուռ տալն է»: Օրինակ՝ Կարմիր Գլխարկը չար է, իսկ գայլը՝ բարի:

Մոխրոտիկը՝ անպետք աղջիկը, մեղմ ու բարի խորթ մորը կատաղեցնում է և հեզ ու հլու խորթ քույրերի փեսացույին խլում:

Ձյունանուշիկը թավ անտառում ոչ թե յոթ թզուկների, այլ յոթ հսկաների է հանդիպումն նրանց ավազակային հարձակումների մասնակիցը դառնում…

« Հեքիաթը շուռ տալու » մեթոդը նոր մտահաղացումների է հանգեցնում: Այն հարմար է տվյալ նյութը ծաղրապատճենելու և ունկնդրին զվարճություն պատճառելու իմաստով:Միևնույն ժամանակ թեման ցանկացած ուղղությամբ ինքնուրույնաբար զարգացնելու և ստեղծագործելու հնարավորություն է ընձեռնում:

Հետաքրքիր մեթոդ է « Հեքիաթների շիլափլավը »:

« Անտառում Կարմիր Գլխարկը հանդիպում է մատնաչափիկին և նրա եղբայրներին »: Այս մեթոդն օգտագործում են շատ մայրեր, երբ հեքիաթներից « չկշտացող » իրենց փոքրիկները նորանոր պատմություններ են պահանջել: Նրանք ինքնաբերաբար հնարաստեղծել և երեխաներին են մատուցել սեփական հորինվածքների տարբերակները: Այս մեթոդները նպաստում են աշակերտի խոսքի, մտածողության և երևակայության զարգացմանը:

Նաև հաճախ է օգտագործվում « կիսատ թողնված հեքիաթի շարունակում » մեթոդը, որը խթանում է աշակերտների ստեղծագործական երևակայությանը:

Գրաճանաչության շրջանում հեքիաթների միջոցով ուսուցումն ունի մի շարք առանձնահատկություններ և առաելություններ:

Նոր առաջին դասարան եկած երեխաների մեջ մեծ է հեքիաթի նկատմամբ հետաքրքրությունը: Այն գրավում է երեխային և նպաստում նրա երևակայության և պատկերավոր մտածողության զարգացմանը: Փոքրիկն իրեն զգում ու պատկերացնում է որպես հեքիաթի գործող անձ:

Հեքիաթի միջոցով հեշտանում է հնչյուն-տառ կապի ստեղծումը. լսելով հնչյունը՝ աշակերտը հիշում է տառի գրաֆիկական պատկերը, որն ստացվել էր հեքիաթի ստեղծման արդյունքում: Նա վերհիշում է հեքիաթը և , բնականաբար, այն բառապաշարը, որն օգտագրծվել է հեքիաթում և հիմնականում կապված էհնչյուն- տառի հետ: Այդպիսի հեքիաթներ են տառերին նվրված հեքիաթները. Օրինակ՝ Ե տառի հեքիաթը…

Մեր՝ դասվարներիս առաքելությունն է՝ հասնել այն բանին, որ երեխան կարողանա հասկանալ և գնահատել հեքիաթի էությունը, փորձի տեսնել իրական կյանքում հեքիաթների հերոսներին , տարբերակել բարին ու չարը, դառնալ բարու կրողը և միշտ հավատալ նրա հաղթանակին:

« Ոչ թե խրատել, ոչ թե սովորեցնել,այլ խաղալ ու ստեղծագործաբար աշխատել, երևակայել, հորինել հեքիաթներ, բանաստեղծություններ, հանելուկներ ու պատմություններ…

Ստեղծագործության հետ շփումը երեխային արդարև կարևոր, մարդուն անհրաժեշտ շատ ու շատ բան է տալիս, անգամ, եթե նա չի պատրաստվում ապագայում գրող, երգահան կամ նկարիչ դառնալ»:

Անատոլի Ալեքսին

Գլուխ 4

Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ / դերախաղ և արտահայտչական միջոցների օգտագործում/

Ժամանակակից հեքիաթները ստեղծվել են որոշակի ռիթմով, տեմպով, որով դասավորվում են աշակերտների մտքի կարողությունները՝ ըստ ընկալումների: Հեքիաթի լեզուն հարուստ է թևավոր խոսքերով, ասացվածքներով, կրկնություններով, շատ ուսուցողական է, նպաստում է երևակայության զարգացմանը, ճիշտ խոսքի ձևավորմանը, սովորեցնում է երեխային կյանք:

Տարրական դպրոցի աշակերտը դեռևս ուզում է հավատալ հեքիաթում տեղի ունեցող դեպքերին, «կախարդական գավազանի» գոյությանը, թռչող ձիերի, ցախավելի, գորգի հզորությանը և այլն:Նրանք ոգևորվում և հիանում են բարի հերոսների հաղթանակով և ձգտում նմանվել նրանց՝ լինել ազնիվ, բարի, արդար, մարդասեր և այլն:Սա է հեքիաթի ուժը , որի բացահայտումով էլ պայմանավորված է նրա բարոյադաստիարակչական կողմը:

Ուսուցիչը պետք է վստահ լինի՝հասա՞վ արդյոքիր նպատակին. փայլեցի՞ն արդյոք աշակերտների աչքերը, նրանց զգացմունքային, բարոյակամային աշխարհը հարստացա՞վ, ի՞նչ սովորեցին հեքիաթի հերոսներից:

Նպատակին հասնելու ճանապարհներից մեկը հեքիաթը դերերով բեմականացնելն է: Մինչ բեմականացնելը պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, կերպարների առանձնահատկությունների քննարկում, հետո անցնել հեքիաթի բեմականացմանը:

Ուսուցիչը պետք է հեքիաթ պատմելիս հաշվի առնի իր վառ և տպավորիչ խոսքի կառուցումը, արտահայտչականությունը: Աշակերտները պետք է զգան հեքիաթի լեզվի և ոճի հմայքը: Այս իմաստով շահեկան է նաև դերասանների կատարմամբ ներկայացվող հեքիաթների ունկնդրումը: Նրանց կատարումը աչքի է ընկնում իր զգացմունքայնությամբ, խոսքի հստակությամբ, պատմողի դիմախաղի պայծառությամբ : Պատմողի ձայնը, դիմախաղերը օգնում են երեխային ավելի ճիշտ և խորությամբ ըմբռնեն ստեղծագործության գաղափարը:

Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլն:

Կարելի է հանձնարարել անգիր սովորել այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում , և պատմելիս անգիր արտասանել դրանք:

Եզրակացություն

Մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հեքիաթն ունի բարոյադաստիարակչական մեծ արժեք, որոնք ոչ թե ներկայացվում ենորպես քարոզ, այլ արտահայտվում են արարքների, խոսքերի միջոցով:

2. Հեքիաթը նպաստում է աշակերտի ստեղծագործական ունակությունների, բանավոր, կապակցված, գրագետ խոսքի զարգացմանը:

3. Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը, ստեղծագործական պոտենցիալը: Այն երեխայի խոսքը դարձնում է ավելի պատկերավոր ընդլայնում բառապաշարը, օգնում ճիշտ և տրամաբանական խոսք կառուցել, ձևավորումէ հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

4. Հեքիաթները աշակերտների մեջ դաստիարակում են մարդկային բարձր արժեքներ, պատմելու կարողություն, գրքի նկատմամբ սեր:

5. Հեքիաթը աշակերտի մոտ մշակում է ճաշակ, զգացողություն, տանում դեպի բարու հաղթանակը չարի նկատմամբ: Այն, ինչ կյանքում անհնար է տեսնել, մարդիկ ցանկացել են տեսնել հեքիաթներում:

6. Այս տեխնոլոգիաների դարաշրջանում երեխային փոքրիշատե կտրում է համակարգչային խաղերից, սոցկայքերից, հեռախոսներից, իրականացնում է նաև կրթական գործընթացի բոլոր սուբեկտների կարևորագույն որակների ձևավորման գործառույթները:

7. Հեքիաթը դառնում է կապող օղակ ուսուցչի և աշակերտի միջև: Հեքիաթի հետ է կապված նաև մեր մանկության հուշերը, այն հեքիաթները, որոնք լսել ենք մեր ծնողներից, մեր ուսուցիչներից, այսօր էլ մենք պատմում ենք մեր երեխաներին:

Օգտագործված գրականություն

1. Զ. Ռ. Ազիզբեկյան. « Հեքիաթի ժանրի որոշ առանձնահատկություններ» քաղվածք

2. « Նախաշավիղ » ամսագրեր

3. Զեռնարկներ և լեկցիաներ

4. « Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա » Երևան 2015թ.